

րեղ է դառնում նրա յեղաշրջիչ ոյժը, այնքան աւելի է աչքի ընկնում տնտեսական անհաւասարութիւնը, այնքան աւելի խոր անդունդ է բացվում հարուստների և աղքատների մէջ, ինչպէս մենք այդ տեսնում ենք տնտեսապէս աւելի զարգացած երկրներում: Այնտեղ այդ անհաւասարութիւնը հասնում է իր գագաթնակէտին. ազգաբնակչութիւնը որոշ կերպով բաժանված է երկու դասակարգի՝ փոքրամասն, բայց երկրի հարստութեան տէր բուրժուազիայի և բազմաթիւ, օրուայ հացի կարօտ պրօլետարիայի (բանտի դասակարգի):

Տնտեսական այդ չարիքի, տնտեսապէս կեղեքող դասի դէմ էլ մենք կը կռուենք այժմ: Մենք գործ կը դնենք ամեն միջոց պահպանելու դոկտրինն ունեցող համայնական սկզբունքները, մենք կաշխատենք տարածել համայնական սեփականատիրութիւնը, համայնական աշխատանքը, որպէս զի աւելի պարաստ գտնվինք անցնելու այն հասարակական կազմակերպութեանը, որն այսօրէգուց կը հաստատվի տնտեսապէս աւելի զարգացած երկրներում պրօլետարիայի յեղափոխութեամբ:

Այս ընդհանուր տեսութիւնից պարզ է, որ Տաճկահայաստանի դրութիւնը միանգամայն սարսափելի է շատ կողմերից:

Ազատել ժողովրդին այդ անտանելի դրութիւնից, ըստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թոյլ տան նրան մտնել ընդհանուր մարդկութեան զարգացման շաւղի մէջ՝ կարելի է միայն յեղափոխութիւնով:

Ընդունելով իբրեւ սկզբունք, որ ամեն մարդ իր քրտինքով պիտի աշխատի իր կերած հացը, որ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտվելու:

Ի նկատի ունենալով, որ ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը հազարաւոր տարիների ընթացքում ցոյց է տալիս մեզ թէ յանձնել ամբողջ ժողովրդի բաղժը մի դասակարգի, որն իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, ֆիզիքական և նիւթական ուժի, կամ թէ նոյն իսկ ուսման վրայ, տալ կառավարութեան ղեկը որ և է դասակարգի, կը նշանակէ ստեղծել ճնշում այդ դասակարգի, դարձնել ժողովուրդը ծառայող այդ փոքրիկ մասի և միաժամանակ անբարոյականացնել իշխող պոլիտիկաներին:

Ի նկատի ունենալով, որ հասարակական կեանքի ալիքը, թուլացնելով առանձին անհատի զազանական ձրգը, թուլացնելով նիւթական, տնտեսական տուժները և պակասացնելով նիւթական, տնտեսական անհաւասարութեան հետ անխորի կապված ճնշումը, տանում է մեզ դէպի եղբայրական սկզբունքները, դէ-

պի ընկերական, համայնական հաստատութիւնները. Ի նկատի ունենալով այս բոլորը, մենք ընդունում ենք.

Ն Պ Ա Տ Ա Կ

4. 3. Դաշնակցութեան նպատակն է ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատութիւն, դնելով ներկայումս հետեւեալ պահանջները. —

1. Ապագայ ազատ Հայաստանում իշխող ժողովրդական — ռաւովարական կառավարութիւնը, ծառայելով ընդհանրութեան շահերին, անշուշտ պիտի հաստատված լինի ամեն հասակաւոր բնակչի հաւասար ընտրողական իրաւունքի վրայ, առանց որ և է ցենզի. իսկ այդ շահերն իրականապէս պաշտպանելու համար ընտրողական սկզբունքը կառավարչական բովանդակ գործողութիւններից սկսած դէպի առաւել նեղ՝ գաւառական և համայնականը, պիտի ստանայ աւելի և աւելի լայն ծաւալ:

2. Կեանքի և աշխատանքի ապահովութիւն ամենախիստ միջոցներով:

3. Տարբեր ազգութիւնների և դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առաջ:

4. Ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովների:

5. Տալ չունեցողին հող և ապահովել մշակողին հողից օգտվելու կարելիութիւնը:

6. Ամեն տեսակ տուրքերի քանակութիւնը պիտի որոշվի ըստ կարողութեան, համարապական սկզբունքով, որ դարերից ի վեր խոր արմատ է ձգած մեր ժողովրդի մէջ:

7. Ոչնչացնել ամեն տեսակ պարտաւորեցուցիչ և չվարձատրվող աշխատանքը, ինչպէս օլամ — կօռուրէ կար և այլն:

8. Ոչնչացնել զինուորական տուրքը, հաստատելով տեղի և ժամանակի պահանջի համեմատ զինուորագրութիւն:

9. Ամեն կերպ նպաստել ժողովրդի մտաւոր զարգացման: Ուսումը պարտագիր անել:

10. Զարգացնել ժողովրդի արդիւնաբերութիւնը մտնելով նրա մէջ նոր ձեւեր համայնական սկզբունքներով և լայնացնել արտահանման միջոցները:

11. Ոյժ տալ գիւղացու և արհեստավորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները, ձեւերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ տեղական և պատմական հանգամանքների ազդեցութեան տակ: Լայնացնել այդ հիմնարկութիւնների սահմանն սկսած թաղից, գիւղից մինչև գաւառը և ապա մինչև ամբողջ պետութիւնը ու այդ պիտի միանգամայն ապահովել համայնքի ամեն մի անհատի բնութեան և ընթացիկ կեանքի պատահական հարուածները:

Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր

4. Յ. Դաշնակցութիւնն ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար կազմակերպում է յեղափոխական խմբեր, որոնք կառավարութեան դէմ անընդհատ և զօրեղ կռուի հետ կռիւ կը մղեն և այն ընդհանուր պայմանների դէմ որոնցից ներկած են միաժամանակ հայ և օտար տարրը (ասորիները, եզդիները, քրդերի մի մասը և խաղաղ տաճիկները և այլն): Այս ուղղութիւնը, բացի իր ընդհանուր նշանակութիւնից, կարող է, եթէ ոչ միացնել, գոնէ չեզոքացնել օտար տարրերի ընդդիմադրական դժբաղդը:

Յեղափոխական խմբերը գործ են դնելու հետեւեալ միջոցները:—

1. Պրօպագանդա անել Դաշնակցութեան գլխաւոր սկզբունքների, նպատակի և գիտակցական վերաբերութեան համար դէպի յեղափոխական գործը:

2. Կազմակերպել մարտական խմբեր, յատկապէս պարպել նրանց հետ վերոյիշեալ հարցերի նկատմամբ և գործով պատրաստել:

3. Ամեն միջոց գործ դնել թէ՛ խօսքով և թէ՛ գործով բարձրացնելու ժողովրդի յեղափոխական գործն ու ոգին:

4. Ամեն միջոց գործ դնել ժողովրդին զինելու:

5. Կազմակերպել յեղափոխական կոմիտէներ և հաստատել նրանց մէջ սերտ կապ:

6. Ուսումնասիրել երկիրը և ժողովուրդը յեղափոխական տեսակէտից և յարատե նիւթ մատակարարել Դաշնակցութեան օրգանին:

7. Կազմակերպել դրամական շրջաններ:

8. Կռիւ մղել և տէռօրի ենթակիւ կառավարչական մարդկանց, մատնիչներին, դաւաճաններին, վաշխառուներին և ամեն տեսակ հարստահարիչներին:

9. Պաշտպանել խաղաղ ժողովրդին, ազգաբնակչութիւնն աւազակների յարձակումներից:

10. Ճանապարհներ հաստատել մարդիկ և զէնք տեղափոխելու համար:

11. Կառավարութեան հիմնարկութիւնները ենթարկել աւերումների և կողոպտումների:

Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Ի Ն

„Դաշնակցութիւնն“ անցեալի փորձից համոզվեց, որ յեղափոխական գործում չի կարող լինել իրաւունքի և պահանջի խնդիր, այլ միմայն բարոյական պարտաւորութեան և բաւարարութեան խնդիր: Ահա այս հիման վրայ Դաշնակցութեան ընդհանուր ժողովն ընդունեց կազմակերպութեան մէջ մտցնել ապակենտրոնացման սկզբունքը, որն աւելի է համապատասխանում ընկերական, բարոյական յեղափոխական գործին և որն անցեալում կիսով չափ գործադրւել էր: Այս սկզբունքով գոր-

ծող կոմիտէներին կապում, միացնում է ընդհանուր ժողովը, որը մշակել է ներկայ ծրագիրը, որի վճիռները պարտաւորեցուցիչ են բոլորի համար և որը միայն ինքն է կարող փոփոխութիւն մտցնել ծրագրի մէջ:

Կազմակերպութիւնը հետեւեալ ձևն է ընդունում:—

1. Բոլոր կոմիտէները թէ՛ քաղաքներում և թէ՛ գիւղերում իրենց ներքին գործերը վարում են անկախ, ինքնուրոյն կերպով:

2. Գաւառական մի քանի խմբեր միանում և կազմում են մի մարմին (խայօն, շրջան), որն ունի իր կենտրոնական կոմիտէտը:

3. Եթէ Տաճկահայաստանի սահմանակից գիւղերում խմբեր չկան, կենտրոնական կոմիտէտի գործը տարածվում է սահմանից դուրս:

4. Իւրաքանչիւր անգամ ենթարկվում է այն կոմիտէտին, որի մէջ գտնվում է (խմբական և ոչ անհատական ապակենտրոնացում):

2. Կոմիտէտ չեղած տեղում Դաշնակցութեան անդամը գործում է անկախ, կապ պահպանելով մօտակայ կոմիտէտի հետ:

3. Դաշնակցական կոմիտէտների և անդամների համար ընդունվում է խիստ շնորհալի և անդամատան:

7. Որ և է կոմիտէտի անդամի սխալը կամ՝ զեղծումը քննում է ինքը կոմիտէտը, իսկ ամբողջ կոմիտէտին՝ իր շրջակայ կոմիտէտների ներկայացուցիչները: Ծանրակշիռ դէպքերում, երբ հարեան կոմիտէտներն անձեռնհաս են վճիռ կայացնելու, քննութիւնը կատարում է ընդհանուր ժողովը:

* * *

Կոմիտէտներն իրենց բոլոր կարեւոր տեղեկութիւնները՝ թէ՛ գործունէութեան և թէ՛ պահանջի մասին ուղարկում են պարբերաբար այն հիմնարկութեանը, որը կոչվում է բիւրօ: Այդպիսի բիւրօ առայժմ ընդունվում է երկուսը... Իւրաքանչիւր բիւրօ, ստանալով վերոյիշեալ գրաւոր տեղեկութիւնները, հաղորդում է թէ՛ միւս բիւրօներին և թէ՛ իր շրջանի կոմիտէտներին: Այն տեղեկութիւնները, որոնք հարկաւոր են խմբագրութեանը, բիւրօներն անյապաղ ուղարկում են նրան: Բիւրօներում ամփոփած տեղեկութիւններից կարելի է գաղափար կազմել յեղափոխական գործի գրութեան և ընթացքի մասին: Բիւրօներն անյապաղ հաղորդում են, ինչ որ հարկաւորն է, կոմիտէտների բոլոր պահանջների մասին:

Ծանօթ. Եթէ մի որ և է ուրիշ կէտ գործունէութեան տեսակէտից մեծ նշանակութիւն ստանայ, նա ևս կունենայ բիւրօ:

* * *

Իւրաքանչիւր կոմիտէտ, հաւաքած նպաստներով իր տե-

ղական կարիքներին բաւականութիւն տալուց յետոյ, աւելորդ գումարն ուղարկում է կենտրոնական կասսան:

Դրամական բոլոր հաշիւները կենտրոնանում են բիւրօներում:

Իւրաքանչիւր կօմիտէտ պարտաւոր է ամիսը մի անգամ հաշիւ ներկայացնել այն բիւրօին, որի հետ կապված է նա: Ծախքի հաշիւը ծայրայեղ դէպքում կարելի է յետաձգել մինչև երեք ամիս:

* * *

Դաշնակցութիւնն ունի իր օրգանը՝ «Դրօշակ» անունով: «Դրօշակը» պիտի լինի անկեղծ արտայայտող, թարգման հայ յեղափոխական կեանքի, երևոյթների: Նորա մէջ պիտի շօշափվին տնտեսական, հասարակական, քաղաքական խնդիրներ՝ համաձայն Դաշնակցութեան ծրագրած ուղղութեան: Կը հրատարակվին նաև ժողովոգրական ու գիտական-սօցիալիստական գրուածքներ:

Իւրաքանչիւր կօմիտէտ կարող է հրատարակել կարելուր դէպքերում «Թ ո ու ց ի կ թ ե թ ե ռ»:

Ն Ա Մ Ա Կ Շ Ա Պ Ի Ն Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ա Ր Ի Ց

Հապին-Գարահիսարի բանտին մէջ կային ի միջի այլոց 6 հայ երիտասարդներ, որոնք կառավարութեան առջև իբր յեղափոխական ճանչված էին. Արմտակցի Գասպար և իր երեք ընկերները՝ Համբարձում, Սեդրակ և Արամ: Սոքա քաղաքի վատահոգի հարուստներէն երկուքի բերանացի յայտնութեան վրայ բանտարկված էին: Իսկ Քարբերդցի երկու Յովհաննէսները, որք կօշկակարութեամբ կը պարապէին, իբր սոցա խորհրդականներ ձերբակալված էին, սոցա թղթերուն մէջ խուզարկութեան ատեն գտած են պզտիկ կտոր մը թղթի վերայ մի քանի տող Հնչակեան կենտրոնի կնիքով կընքված: Այս թղթին ինչ ըլլալը նոյն իսկ մատնիչ վաճառականաց միոյն շուկային մէջ բարձրաձայն թարգմանած ու պաշտօնեաներուն տեղն ի տեղը հասկացրած են: Տարի ու կէս բանտին խոնաւ յարկին տակ ամենածանր շղթաներով կաշկանդված, երբեմն ալ անօթի օրեր անցուցած են այս վեց հոգին: Բանտէն փախչելու մէկ երկու անաջող փորձերէ վերջ ներկայ տարւոյս յունիս 14 թիւ երեքշաբթի երեկոյեան բոլոր բանտարկեալներու հետ այս 6 քաջերն ալ դուրս հանված էին ժամ մը օդ առնելու: Բանտ վերադառնալու պահուն արաբ Պէշիրին ստակ տալով կը խնդրէ մի երկու ժամ գաւթի ձիալ բարեկամի մը սպասել առարկելով: Միջինէն ժամ մ'առաջ կուգէ բանտ մտնալ այլ ևս սպասածին գալէն յուսահատ: Պէշիր զապթի էի մը կը յանձնէ բանալին, որպէս զի Յովհաննէսը բանտ մտցունէ: Դրան բացվելուն ներսէն միւս Յովհաննէսը և Գասպարը զինեալ դուրս խուժելով, զապթիէն կսպանեն և երեքնին միասին սանդուխներէն վեր կը փախչին: Պաշտօնատան մեծ գաւթին մէջ գտնվող զապթիաներէն երեքը սպանելով, շուրջերնին ահ ու սար-

սափ տարածած՝ կը յաջողին դուրս սպրտիլ: Բաւական հեռանալէն վերջ Գասպար ետ դառնալով, կսկսի զիրենք հալածող թշնամոյն խմբի վրայ կրակ ընել: Երկու Յովհաննէսները տեսնալով Գասպարին ուշանալը, յետ դառնալով կը դիմաւորեն զայն ցաւալի վիճակի մէջ: Գասպար գլխէն գնտակ մը կերած թաւաղալոր կուգար: Կը շալկեն զայն և բաւական տեղ կը յաջողին տանել: Վերջապէս Գասպար ինքն իրմէ յուսահատ կը պաղատի անձնուէր ընկերներուն, որ թողլով զինքը, իրենց կեանքն ազատեն: Յովհաննէսներն ակամայ կը թողուն: Արտերու միջէ փախչելու ատենին, արտ քաղող թուրքերէ եկած գերանդիի անգուլթ հարուածով մը մին կիսնայ սրունքներէն ծանրապէս վերաւորված, միւս ընկերը կը շալկէ զայն և կը յաջողի բաւական յառաջանալ, բայց դժբաղդութիւնն այն կըլլայ, որ ձեռները զայն բռնելու պարապած ըլլալով, այլ ևս անկարող կըլլայ գէնք գործածելու: Բայց հերոսը նախաձեռնար կը սեպէ մեռնել քան թէ ընկերը ողջ ողջ թշնամոյն առջև ձգելով ազատիլ: Թշնամին նորա ծանրաբեռեալ և գրեթէ կաշկանդված վիճակէն օգուտ քաղելով, աւելի արագապէս կը խուժէ նոցա վերայ և գնտակի կարկուտով կը ծածկէ զանոնք: Միոյն մահը անմիջական կըլլայ:

Երկու վիրաւոր և մէկ մեռեալ կը փոխադրվին պաշտօնատուն: Գիշերանց միւթէսերի՞ք պաշտօնատուն գալով, կսկսի հարցաքննութիւնը: Վիրաւորները զենքերու ստացման մասին զապթիէներու օժանդակութիւնը վստեալ ըլլալը կը խոստովանվին և շատ համարձակ պատասխաններ կուտան: Ասոր վերայ կատաղած միւթէսերի՞ք կը հրամայէ ան պիտան երը հեռացնել: Զապթիէները կարծես հասկանալով քաղաքապետին կամքը՝ խեղճ վիրաւորները պատուհանէն պարտէք սալայատակին վրայ կը նետեն երեք գրկաչափ բարձրութենէ: Թշուառ Յովհաննէսն այս պահուն հոգին կուտայ, իսկ Գասպար կտորած, ջարդված, անգամ մը ևս քաղաքապետին ներկայութեան հանվելու դժբաղդութիւնը կունենայ, բայց հակառակ անոր յուսոյն՝ դարձեալ կսկսի յանդգնաբար խօսիլ: Գասպար երկրորդ անգամ պատուհանի ճամբովը պարտէզ կիշեցնելի, ուր զապթիաները տեսնելով նորա տակաւին ողջ ըլլալը դաշոյնի հարուածներով կը յօշոտեն զայն:

Արիւնուռտ գայլերը երեք նահատակներու արեամբ չբաւականանալով բանտ կը մտնան և նոցա երեք ընկերները ևս կսկսեն չարաչար տանջել և վերջ ի վերջոյ սուրիներու հարուածներով ծակծկելով՝ երեքն ալ կսպանեն:

Հետեւեալ օրը կառավարատան կամ, աւելի լաւ է ըսել, նոր սպանդարանի պարտիզին մէջ, աղտոտ փոխաթի մը տակ, քով քովի պառկած էին վեց անմոռանալի նահատակներ: Իւր ո՞վ էր այն, որ տեսնալով թըրքական պիղծ պատերէ ներս, արդարութեան պալատ անուան տակ՝ մարդկային սպանդարանի շուքին տակ պառկած վեց սուրբեր, կաթիլ մ'արցունք չհանէր չերէն և չուխտէր ցմահ աշխատիլ սոցա և նմանեաց վեհ վրէժը լուծելու...

Ն Ա Մ Ա Կ Պ Օ Լ Ս Ի 8

Տաճիկ բռնապետութիւնը դաւաճան Աշըղեանի հրա-
ժարականն ընդունող թէզքերէի հետ, հրամայած էր
անյապաղ պատրիարքական ընտրութեան ձեռնարկել, ո-
րով երազած էր միանգամայն ընդ միշտ ջնջել սահմա-
նադրութիւնը: Բռնապետութեան յոյսերը պիտի պսակ-
վէին, եթէ ապօրինի խառն ժողովը հպատակէր բռնա-
ւորի հրամանին: Պատրիարքական ընտրութիւնը ըստ օ-
րինի, ըստ սահմանադրութեան պիտի կատարէ ազգա-
յին երեսփոխանական ժողովը, որը 2 տարիէ ի վեր դա-
ւաճան պատրիարքի, մասնիչ Յիմէօն-բէյի և թուրք
բռնապետութեան շնորհիւ գոյութիւն չունի: Ապօրինի
խառն ժողովը, որքան ալ բարոյապէս ընկած ու ստո-
րացած էր, այնուամենայնիւ մերժեց պատրիարքական
ընտրութիւնը կատարել և կառավարութիւնը ստիպված
եղաւ պատրիարքական ընտրութեան համար տրված խիստ
իրատէն փոխել և միւս օրը տեղապահական ընտրու-
թեան հրաման արձակել: Այս անգամ խիստ սպառնա-
լեաց ներքեւ կատարվեց ընտրութիւնը. ընտրվեց Դի-
մաքսեան Հմայեակ 13 քուէով, մինչդեռ խառն ժողո-
վի ձայների ընդհանուր թիւն է 28: Դիմաքսեան ար-
դէն իր պարտքը կատարեց ազգի առաջ. իր առաջի
քարոզին մէջ նա հայհոյեց յեղափոխականներուն և
գովեստներ ու փառաբանութիւններ շոպյեց ամենաո-
ղորմած Սուլթանին:

Թուրքաց բարձրագոյն բոլոր դպրոցներու մէջ աշա-
կերտները և ուսուցիչները կը գտնվին ամենախիստ հըս-
կողութեան տակ: Բոլոր դպրոցներու մէջ բացի պաշտօ-
նական լրտեսէն, կան և գաղտնի լրտեսներ աշակերտնե-
րու ու ուսուցիչներու մէջ: Աշակերտներու, ուսուցիչնե-
րու ամեն քայլերը, հաւաքումները, գրքերն ու խօսակ-
ցութիւնները կը լրտեսվին: Ամսոյս 2-ին Միլլիէի վար-
ժարանի շատ մը աշակերտներու տունները խուզարկվե-
ցան և աշակերտներէն շատերը ձերբակալվեցան, որոնց-
մէ մէկը հայ է, իսկ մնացեալները տաճիկներ:

Անցեալ տարի հոկտ. ոգոստօնցի 12 տարեկան տղայ
մը, Լեոն Դոլմեյեան, որը տեղւոյն դպրոցներու գոցվե-
լուն պատճառով (դորա պատճառը նախկին առաջնորդ
Դիմաքսեանն էր. իր երեք ոսկիի համար առանց խնայե-
լու հարկւրաւոր մանկտիւն, ուսուցիչները ցրեց և դպրո-
ցը քանդեց) Պօլիս եկած էր ուսանելու համար, բայց
հոս չկրնալով որ և է դպրոց մտնել, կոտրած սրտով կը
վերադառնար տուն: Մաքսատանը Լեոնի գրքերը կը
գրաւեն և մէջէն «Թո՛ղ կորնչին տաճիկները» երգը կը
գտնեն: Տղան անմիջապէս կը բանտարկվի: Տղան շատ
կը նեղեն որմէ առաձնին խմանալու, բայց նա չըսէր: Կը
թեւադրեն, որ նախկին ուսուցիչներ ցուցնէ, բայց պըս-
տիկ հերոս Լեոնը միանգամայն կը մերժէ այդ չար
խորհուրդը և արիաբար կը նախապառվէ բանտարկու-
թիւնը, քան թէ սեւ, անարգ մատնութիւնն ու զոպար-
տութիւնը: Լեոնը կը փոխադրվի Էտերնէ և հոն գնեւո-
րական ատենի առջեւ դատվելով, կը գատապարտվի 11
ամսու բանտարկութեան:

Ընդգրկմադրութեան գեղեցիկ օրինակ մը.

Սեբաստացի Մանուկը բարձրահասակ, սեւաչեւայ, ա-
մուր կազմուածքով ու վերին աստիճան անկեղծ, մաքուր
բնաւորութեան հայ մըն էր. սա մէկն էր այն հայ կըտ-
րիճներէ, որոնց վրայ Տաճիկ բռնակալութեան այլասե-
ռող ազդեցութիւնը չի երևում ամենևին.—կարծես ա-
զատ լեռներու ազատ ու մաքուր զաւակն իր ամբողջու-
թեամբ կը խօսէր անոր մէջ: Բնաւորութիւնը խիստ քաղ-
ցըր էր և համակրելի, ոյժն առիւծային. ոչ մէկ խօսքի
տակ չմնացող, շիտակ ու պարկեշտ: Մանուկը կը ծառա-
յէր վաճառականի մը խանութի մէջ, որու դրանը նըս-
տած կը տեսնէի զինքն ամենայն օր անց ու դարձիս ա-
տենը. հայ լրագիր մը ձեռքը, միշտ կը կարդար: Իսկ
ընթերցումը, գեղեցիկ, օրինակելի, մարդու միտքն ու հո-
գին բարձրացնող գրուածներու ընթերցումը մէկն է այն
սակաւութիւ միջոցներէ, որ մարդոց առաջ կը հարթեն
ազատութեան ուղին:

Օր մը Մանուկը Ղալաթիայէն կը վերադառնայ եղեր
Բերա: Ճամբան, ինչպէս կըլլայ, մէջքի կարմիր գօտին
կը քանդուի և մէջէն երկու նամակ կ'իյնայ: Մանուկն
անմիջապէս նամակները կը վերցունէ, նորէն տեղը կը դը-
նէ, գօտին կը կապէ և կուզէ ճամբան շարունակել: Փոլիս
մը կը նկատէ այդ. անմիջապէս ճամբան կը կտրէ և նա-
մակները կը պահանջէ: Մանուկ նամակները չի տար: Փո-
լիսը կուզէ բռնի տանել զինքը պահականոց, նորէն կը
զիմադրէ, չի երթար. խոժոռ, արհամարհական ակնարկ մը
կը նետէ փոլիսի վրայ և կուզէ ճամբան շարունակել: Փո-
լիսը նեղը կ'ընկնի: Տեսնելով, որ բռնի չպիտի կրնայ Մա-
նուկը պահականոց տանել, գացած ատեն ետեւէն ֆէսը
կը խլէ և դէպի պահականոց կերթայ: Մանուկը ետեւէն
կը հասնի, ֆէսը ձեռքէն կ'առնէ և հանդարտ քայլերով
իր ճամբան կը բռնէ: Փոլիսը նորէն ետեւէն կը հասնի,
կից մը կուտայ և անլուր հայհոյանքներով կուզէ պա-
հականոց տանել: Այդ միջոցին Մանուկ կատաղի առիւծ
դարձած, կը յարձակի փոլիսի վրայ, մէկ հարուածով
գետին կը գլորէ, վրան կը չօքի և կսկսէ բռնունքներով
սոսկալի ծեծ մը քաշել: Փոլիսի «ջան կուրթար» (հոգի
փրկող) ձայնին վրայ բազմութիւն կը հաւաքուի, բայց չի
յաջողիր Մանուկն հեռացնել: Այդ միջոցին փոլիսը կեր-
պով մը բեռները կը հանէ, որ զարնէ Մանուկը, բայց
սա կայծակի արագութեամբ պզտիկ դաշոյնով մը կը
կտրէ փոլիսին ձեռքը և բեռները ձեռքէն կ'իյնայ: Աջ
ու ձախէն հայ, յոյն կըսեն.— «այ մարդ, փախիր, հոգիդ
ազատէ»: Մանուկը նուաստութիւն կը համարէ փախչիլ
և հանդարտ իր ճամբան կը շարունակէ: Փոլիսի սուլիչի
ձայնին վրայ ուրիշ փոլիսներ, զափտիսներ օգնութեան
կը հասնին, Մանուկը կը ձերբակալեն և բանար կը տա-
նին, ուր և կը գտնուի ցարդ:

Մանուկն աներկիւղ խոստովաներ է ըրածը, բայց ինք
զինքը միղաւոր չի ճանչնար:

Մշում ծագեր է մեծ կռիւ հայերու և տեղական սակա-
ւութիւ զօրքերու մէջ: Շճմած միւթէսերիֆը հեռագրով
զօրք է պահանջած: Արիւնահեղ ընդհարումներ նաև ի Սա-
սուն: Մանրամասնութիւնը շուտով կը հաղորդենք:

Դար 25, որ դրանք զբաղուս սո սրտ զբաղով, բայց յոլութեան համար առարկառչ ուղիմաստն էր որով...

ՀԱՄԱԿ Ի ՀՈՒՍԻՑ

(Շարունակ.)

Նոյեմբ. 7-ին Պաթումեն, Պոլսէն և այլ կողմերէ վերադարձող 48 հոգի սեւլաճիներ (պանդուխտներ) կարինէն Նսնուս անցած ատեն, Բաքմանի մէջ Բօնջար կոչած քրդաբնակ գիւղը կիջեանեն: Սոյն գիւղացիք զիջերով զինեալ խուռն բազմութեամբ կը յարձակին պանդուխտներուն վրայ և կսկսեն թաշնել: Պանդուխտք քանի մը մէջիտեյով հաղիւ իրենց օձիքը կազատեն և յետոյ անդ գտնվող ոստիկանին կը դիմեն իրենց փնասը պահանջելու, բայց զԺբարդութիւնն այն է, որ ոստիկանին իսկ անկարող կը լինի պաշտպանելու:

Նշեմք. 8-ին Բերդի ոճրագործ բանտարկեաներէն
1] հոգի գիշերը ժամը 6-ին իրենց ոտքերէն շղթա-
ները հանելով՝ աղմուկ կը հանեն, իբր թէ կոխ կը-
նեն, երբ բանտապետը ներս կը մտնէ հանդարտեցնե-
լու, մի քանի կեղծ հարուածներ կուտան ու դուրս կը
թուչին: Սոքա իբր թէ խորամանկութեամբ փախած Պը-
քըջի և Ճէպրանցի ցեղապետներ էին, որք վերջերս թալ-
նուած Տուշլայի փոստը յափշտակելու ամբաստանու-
թեամբ բռնված էին: Այդ ցեղապետներ՝ Շէյսն և Սը-
յոն հանրածանօթ աւազակներ են:

Նոյեմբ. 12-ին Հապատին գիւղէն Սրգոյի տղայ Պըլ
տոյին 22 ոչխար գիշերով կը տանին Տիվան քրդաբը-
նակ գիւղի ճէպրանցի քրդերը: Սա այն բանով յայտ-
նի է, որ ոչխարի հետքերը կը հասնին մինչև այդ գիւ-
ղը: Երկիցս դանգատ կը լինի, բայց կառավարութիւն-
անխելի կը թողու: Ոստիկանապետը կը մերժէ ոստիկան
տալու, որպէս զն յիշեալ գիւղերը խուզարկի: Երկրորդ
անգամ՝ տուած աղբրսագիւղները Երատէյի ժողովոյ ան-
դամ Մովսիսեանցի Ահմէդ աղան գայմագամի ձեռքէ
խելով, կը պատռէ և գանգատող հայը կը վռնտէ:

Նոյեմբ. 13-ին Ճիպարանցի Բեզլին աղայի տղան Սաստի Պուրհան գիւղի միւլթելիզմը իւր հաւաքած տասանորդը Մարուք գիւղին մէջ ամբարեւոյ համար գիւղացիներէն տեղ մը կուզէ, բայց երբ գիւղացիք բացասական պատասխան կուտան, բարկացած՝ հայերը այնքան կը ծեծէ ու կը հայհոյէ, որ գիւղացիներէն մի մասը կը փախչէ և մօտակայ Շապատին գիւղը կապաստանլի մինչև սրա գիւղէն հեռանալը:

Նոյեմբ. 14-ին հռչակաւոր աւազակապետ Մուսա բէ-
կի որդին Ալի բէկ, որ 14-15 տարեկան պատանի մ'է,
15 ձիաւորով բերդ երթալու ատեն, յիշեալ Մարութ
գիւղը կիջեանէ, երբ իր պահանջներն լիովին չեն կա-
տարեր, սպառնալիքով կըսէ. «Գիտե՞ք, ես ով եմ. ես
այն Մուսա բէկի որդին եմ, որ հայերը Չուխուրի մէջ
ջիջով խորովեց: Եթէ ուզածներու չտաք, նոյնը եսկ ընեմ:»

Նայեմք. 22-ին Փայեկցի քրդերը 25վերմէ գիւղին մէջ ցորենի հոր մը բանալով, ցորեն կը գողնան: Խը- նուս գաւառակի հպատակաց շահերը պաշտպանելու հա- մար եկած հարիւրապետը, զանազան դիւղերէ գարի հաւաքելով, խաբած է և էմուխաբեր (ստացագիր) չէ տուած: Միաժիտ գիւղացիք վերջէն քանիցս դիմած են ստացագիր ընդունելու, իսկ նա կոպիտ խօսքերով վաժն-

տած է: Հաւաքած գարիններու քանակութիւնը 10 սոմարի կը հասնի, զորս առած է հետեւեալ գիւղերէն. Ղարաքմէօփրաւ, Պուրնազ, Եօնջալու, Տատապետուն, Խըրխըրուտ, Կիւնտիւզ, Ղօլիմախսատ, Կէօվէնտիք, Սալվօրէ, Խըմդալա, Կոսալ և Ղարաջօսան:

Սա զարմանալի չէ այնքան, որ պետք եղած ստացագիրը չեն տար, այլ այն աւելի զարմանալի է, որ գիւղացիներին իրենք զօրքերը բռնի ստացագիր կը պահանջեն սա բովանդակութեամբ, թէ յայսքան... ստացած եմք գարիի կամ ուտեստի համար...»

Նոյեմբ. 26-ին Բիւրականեան (Պինկեօլ) սարի վերայ
Թւրպ կռիված տեղը Պաշէթյ գիւղի մօտ հարկահաւա-
քիչ զօրք կսպանվի Շուշարցի քրդի մը կողմէ:

— 〇 —

Ահա ապրիլ ամսոյ մէջ ալ մեռա գործեցի՛նք, դեռ
անուս ձիւնապատ է. 6 թիգ հաստութեամբ ձիւն կայ
անուսի դաշտի մէջ: Ժողովուրդը ապրելու ամեն միջո-
ւէ զուրկ է: Հացի պահասութեան վրայ աւելցաւ նաև
անասնոց, ուտելեաց պահասութիւնն: Ժողովուրդը, որ
յոյս ունէր գէթ գարնան իր անասնոց կաթով ու բան-
արեղէններով ապրել, այն յոյսն ևս ի գերեւ ելաւ: Ժո-
ղովուրդն սկսած է զաւակներն առնուլ և փախչիլ աստ
և անդ: Յուսահատ և ճարահատ մնացած է ժողովուր-
դը. ինչպէս նաւը ալէկոծ մըրկին մէջ տատանելով՝ ժայ-
ռերէն կը խորտակվի, նոյնպէս հայ հասարակութիւնն
ամեն կողմէ ճարահատ սկսած է զարնվիլ գաղթակա-
նութեան ժայռին: Եթէ հետաքրքիր մէկը նայէ Բասէ-
նի գաւառակէն Խնուսի լեւանց վրայ, յայնժամ կը պար-
զուի իր աչաց դէմ աղեկտուր և սրտաճմրկ տեսարան.
օրինակ, Խնուսի գայմազամանիստ Բերդ աւանի մէջ
6 քրդաց կառավարութեան տունը մեռնեն անօթու-
թենէ. Աղվերան կոչուած քրդաբնակ գիւղի լեւան վրայ
քրդուհու մը մեռնելը, Խնուսի Հարեմիկ հայ գիւղի մէջ
երեք հայոց իրենց ընտանեաց և զաւակաց հետ միա-
սին մեռնիլ ևն. ևն.: Աերջապէս այսօր հայոց լեռնե-
րու գլուխներ դիակներ կը մնան անթաղ, մանուկներ
մայրերու գրկաց մէջ վայրի գազանաց և երկնից թռու-
նոց կեր կը դառնան, հայ հասարակութիւնն ուր որ կը
գիմէ միշտ դաւեր կը բացուի իր ոտից տակ. . .

Կառավարութեան հաւաստանքն ի ԽՍՀՄ-ն ուս. Խնուարի Բերդ աւանի Տ. Մկրտիչ քահանայի տան մէջ գտնվող մուրացիկ տաճիկ մը գիշեր ժամանակ զօրաց յիսնապետի սենեակ մտնելով, ուր ոսկիի մը գողութիւն կընէ. երկու օր անցնելէ վերջ յիշեալ Տ. Մկրտիչ եղբայր Մօռօն կը վննդէ տաճիկ մուրացիկը, որը գրգռեալ կերթայ յիսնապետին կը խօսի, թէ «բուՑ ոսկիդ ես եւ Տ. Մկրտիչ եղբայր Մօռօն գողցած ենք»։ Այս ամբաստանութեան վրայ, առանց այլ ևս նայելու ճշմարտութեան, գիշերուայ ժամը երեքին, Տ. Մկրտիչ տան և ընտանեաց մէջ աղմուկ ու ժխոր կը փրթի. Տ. Մկրտիչ և իւր եղբայր ոստիկանաց միջոցաւ կը փոխադրուին ոստիկանատուն։ Զիսնապետն առանց հարցաքննութեան կըսկսի անյուր հայհոյանքներ թափել կրօնական, ընտանեկան և անձնական պատուոյ դէմ. պղպարազային այլ ևս չհամբերելով՝ յիշեալ քահանան

Քնն ևս կըսկսի հասցոյել: Ասոր վրայ յիսնապետը կը հրամայէ ոստիկանաց գետին ձգել զինքը. խարազանով կը կապուտացնեն մարմինը. երբ գրէթէ ուշաթափ վիճակին կը հասնի՝ այն ատեն միայն յիսնապետը կը հրամայէ բաց թողուլ: Խեղճ քահանան կիսամուռ վիճակի մէջ երբ գէպի տուն կը դառնայ, գիշերային միջուկեան մէջ կը տեսնէ 12 ոստիկանաց իւր տան դուռը կարգաւ շարուիլը, կը հասկանայ իւր օրհասական ժամը և կըսկսի օգնութիւն կանչել: Այդ պարագային մէջ նորէն յիշեալ հարկւրապետը դուռս կելլէ և կը պոռայ ոստիկանաց վրայ. անմիա կանցնի քահանան մինչև իւր տուն: Հետեւեալ օր, երբ ընտանիքով միասին կը դիմէ գայմագամին և եղած անկարգութեան դէմ կը բողոքէ: Գայմագամը պաղարկնութեամբ կը պատասխանէ. «գարար եօգ տուր» — փնաս չունի:

(Կը շարունակվի)

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ս Ե Ն Ի Ց

Ահա հասանք գարնան. Խնուսը, որ ձմեռուան եղանակին ևս չունեցաւ հանգստութիւն, այսօր մի կողմէ կառավարութիւնը և միւս կողմէ քիւրդ տարրն գրէթէ պաշարման վիճակի դրած են: Ի՞նչ ընէ հայը, երբ մի կողմէ կառավարութիւնը ձերբակալելով բանտերու մէջ կը մեղցնէ, իսկ միւս կողմէ քիւրդն հայ գիւղերու վրայ յարձակում գործելով Հայ գիւղացիի ձեռքէն կը խլէ իւր քրտինքով վաստակած պատառն: Իսկ Բասենն, ուր կառավարութիւնն այժմ իբր թէ իւր ուշադրութիւնը դարձուցած է դէպի հայ տարրն, Եւրոպայի տերութեանց աչքը փակելու նպատակաւ, մի մի բուռ հաց կը ցրուէ. որով կառավարութիւնը կուգէ ցոյց տալ թէ աւագակապետ Սուլթանը կը փափագի Հայաստանի խաղաղութիւնն և ժողովրդի բարօրութիւնը. բայց իր մի բուռ հացը դեռ ժողովրդեան բերանը չհասած, սկսած է աննկարագրելի խտութեամբ հարկերը ժողովել: Արդեօք ծիծաղելի չէ՞ այս դրութիւնը, երբ լուրջ ուշադրութեան տակ առնուեք ինչ արժէք պիտի ունենայ այն կտոր հացը, որ տալէն վերջ գլխին զարնելով փոխարէնը հարկւրապատիկը տուեել պիտի տայ և այն ալ սովամահ ժողովրդին ցանելու սերմ կուտայ ոչ թէ օգնելու նպատակաւ, այլ որ հընձոց ժամանակ սկսի քառապատիկն առնել և այդպիսով ժողովուրդը կրկին կը մնայ նոյն անօթին, նոյն չքաւորը և նոյն հարստահարեալն:

Այսպէս ընելէ վերջ, սկսած է մի կողմէն ալ ժողովրդեան տունները խուզարկել վերջերս Կարին քաղաքն մեծ խուզարկութիւն ունեցած է. նոյնպէս Բասենի գայմագամանիստ Հասանգալէ աւանը, որի մէջ կը գտնվի 20 տուն հայ, ձերբակալած են Աստածածին վանքի գործակատարն՝ Սարգիս Չաւուշ մի քանի մշակներով, որոնք դեռ բանդի մէջ կը հիծեն առանց հարցաքննութեան: Նոյնպէս կը խօսվի, որ կառավարութիւնը հայ գիւղերու մէջ զօրքեր պիտի լեցունէ: Աւելի զարմանալին այն է, որ կառավարչական զօրքերը վայրենաբար սկսած են պատահած ճանապարհորդները կողոպտել ծեծել և այլն: Օրինակ, ապր. 22-ին Բասեն գաւառի

մէջ, Արաքսի վրայ շինած կամուրջի գլուխ Մշեցի մի քանի գաղթականաց վրայ յարձակելով, կողոպտելէ զատ, աննկարագրելի չարչարանքներ տուած են նոցա:

Ամրագամ քրդաբնակ գիւղի քով ժողովրդի խաղաղութիւնն փնտրող զօրքերը Եւզվերան գիւղացի Մարտիրոս անուն երիտասարդի վերայ յարձակելով, մի քանի հարուած տալէ վերջ, երիտասարդն ձիով լինելով, կսկսի փախչել: Յիշեալ երիտասարդն գիւղէն ժողոված գրէթէ 30 ոսկիէն աւել հարկն կառավարութեան կը տանի. զօրաց ինչ հոգն է, հարկ թէ տուրք է, հայերը թող կրկին վճարեն:

Տէրիպապէ գիւղացի Փաշիկի Խաչօ անուն Թանձի վերան կրկին Արաքսի կամուրջի վրայ յարձակելով, կսկսեն զարնել, հայ երիտասարդը կըսկսի դիմադրել քաջութեամբ, թէև զօրաց կողմէ ալ վերաւոր կիյնայ, բայց զլլխէն հարուած մը ստանալով, ուշաթափ գետին կը փռվի. զօրքերը թող լուր, կանցնին: Ճամբորդները տեսնելով, մօտակայ հայաբնակ գիւղը տեղեկութիւն կուտան. հայերը կուգան անշուշտ գիւղը կը տանին. ցարդ վերջին ճրգնածամի մէջ կը գտնվի:

Քէօփրիքէյ հայաբնակ գիւղի մէջ գաղթական Մանուկ անուն հայն այնչափ կը գանակոծեն, որ երկու օրէն վերջ կը մեռնի: Այդ անգութ բարբարոսներ գեոյժ յագեցնելով իրենց վայրենի կիրքը, անոր զաւակներն ու կինը Հասանգալէ կը տանին և բանդը կը նետեն, թէև վերջէն կը թողուն, բայց խեղճերն անհնար կը թափառին այս և այն կողմ:

Ճրասոն հայաբնակ գիւղի վրայ քրդերն ամեն գիշեր յարձակելով, յայտնի թէ գաղտնի կը սկսեն թաւանել, գողնալ և այլն. վերջապէս սոյն գիւղացիք այլ ևս չը դիմանալով այդ հարստահարութեանց, սկսած են ցիր ու ցան ըլլալ: Այս ամենի գլխաւորներն են համիտիէ հեծելազօրաց յիսնապետ Նապօն և միրալայի Սերիւր:

Այս է Բասենու ընդհանուր վիճակը:

Ե Օ Ձ Ղ Ա Տ Ի

Վ Ե Ր Ջ Ի Ն Դ Ե Պ Ք Ե Ր Ը

Ներկայ համարից սկսում ենք տպագրել Խօզդատի վերջին դէպքերի առթիւ դեսպանատանց ուղարկած բողոքագրերի թարգմանութիւնները, ուր մանրամասնօքն և ճիշտ արձանագրված են Սուլթանի կառավարութեան և մահմետական մոլեռանդ ամբօխի կատարած բոլոր բարբարոսութիւնները:

Ռուսիոյ, Անգլիոյ և Ամերիկեան Միացեալ Նահանգաց Կ. Պօլսոյ դեսպանատանց

Վսեմաշուք Տէր,

Կառավարական պաշտօնեաներու, իսլամ հասարակութեան և շէքքէզներու կողմանէ Խօզդադի և շրջակայ հայ գիւղերու մէջ սիսթեմատիք կերպով կատարվող հարստահարութիւնք, սպանութիւնք, անարգանք, աւարառութիւնք և զրկանք մանրամասնօքն էնգիւրէի կուսակալութեան Անգլիական հիւպատոսին ըստ իր փափագանացը ներկայացուցինք, այս անգամ ալ առիթ մը գտնալով՝ տեղի ունեցած աւելի սոսկալի պատահարները

Ձեր վսեմութեան կը յայտնենք: Այս դէպքերը, զորս պիտի յայտնենք, Ձեր գթառատ սիրտը աւելի դիւրաւ պիտի յուզէ: Այս քաղաքակիրթ դարու մէջ թշուառութեան, գերութեան ահռելի անդունդները թաւալ-վըր ինկնող անտէր թշուառ հայերուն յանուն արդարութեան օգնական ըլլալնիդ միակ միջոցն է: Ինկատի ունենալու է, որ ասոր ամէն մէկ կէտը իրականութիւն է, առաջին մասը արդարադատ քննութեանց յանձնախմբի, երկրորդ մասը զինուորական ատեանին բռնած ծամբան է. կատարած ապօրինի հարցաքննութեանց և դատաւարութեանց արդիւնք ըլլալով, պատահած ցաւալի դէպքերը կը բացատրէ: Այս տեղեկագիրը կարդալու շնորհն ընելով, բանտի, գիւղի և տանց մէջ հոգեվարք իյնող եօզղատցիներուն Ձեր վսեմութեան օգնութիւնը յանուն քրիստոնէութեան վարկեան մը յառաջ հասցնելնիդ ծունկեջոք, արտասովելով կաղաչենք:

1893 թ. նոյեմբ. 23ին հայ եկեղեցիքն իսլամ հասարակութեան կողմանէ պաշարվիլը ցաւօք իմացուցինք Էնգիւրէի անգլիական ընդհանուր հիւպատոսին: 1894 յունվարի 21-ին, ուրբաթ օրը, 40-50ի չափ իսլամներ յինչ որ պիտի ըլլայ, թող ըլլայ, բոլոր հայերին պիտի ոչնչացնենք՝ աղաղակելով կառավարչի վրայ կը յարձակին և կառավարիչն ալ վախնալով դէս չեմ խառնվիր, ինչ կուզէք, ըրէք՝ կը պատասխանէ: Կէս օրին պատերազմական փողը կը հնչէ, մինարէին
. . . աղօթքը կը կատարէ, զօրքերը միացած իսլամ ժողովրդի հետ կամուրջները, մեծ փողոցները կը կտրեն, կը յարձակին տուներու ու խանութներու վրայ, կրակ ընելով: Ճամբաները, շուկան նոյն իսկ տուները շատ մը անկարող հայեր կը բռնեն, զօրքերը Մարթինի հրացաններով և սուրինով իսլամ հասարակութիւնը դաշոյնով, կացինով, քարով փայտով կսկսեն հարկուքստմենք գործի մը: Ողջ փախչողներէն 42-ի չափ վիրաւորեալներ կը ձերբակալեն, 40-ի չափ ալ կը յաջողին տանը ապաստանել: Ի բաց առեալ հս ու սարսափէն յառաջ եկած մահները և ծանր վէրքերէն կացինով, սուրինով, դաշոյնով և այլ զէնքերով 14 սպանեալ հրապարակը թողված էին, խանութները և տուները աւարի տուեր են: Մահտեսի Գըչընի ամուսին և փաստաբան Նահապետ էֆ. տուներուն պատերը գընտալներով ծածկված են. այդ երկու տուներուն վրայէն առանց չափազանցութեան մէկ մէկ հօխա գնտակ ժողված են: Հաճի Գըչընի զաւակն անձրեւի պէս տեղաջող գնտակներէն զարնվեցաւ և Նահապետ էֆ. ալ հողին տակը պահվեցաւ ընտանիքին հետ, բայց ազատվելու ի վարձատրութիւն բանտարկվեցաւ: Այսպիսով աւարառութեան և յայտնի կերպով կատարված ջարդին նախորդ յաճախմբի նախապահ Հիւլի փաշայի ջանքով վերջ կը տրվի և յետոյ կսկսեն սպանութեան գործին բանտին մէջ, որ սպանդանոցի վերածված էր, ուր ոչխարներու տեղ մարդեր կսպանվին:

Այդ օրը ձերբակալեալ Բէհրիպարճեան Գրիգոր վի-
րաւոր, առանց կրակի, առանց անկողնի, առանց հացի
միայնակ կը խոթեն երկաթի խուցը: Այդ մարդու ա-

տանկ պաղ սենեակի մը մէջ պաղ օդով մնալը տես-
նող 41 հայեր և 3 իսլամ բանտարկեալներ գոնէ ան-
կողին մը տրվիլը պահնորդ իսպէն կը խնդրեն, բայց
այս խնդիրքը չընդունվիր, որովհետև անոր նոյն գիշե-
րը սպանվիլը որոշված էր. քիչ յետոյ միւս բանտար-
կեալները կը լսեն, որ զինուորական փախստական մը՝
եօզըզադի թօփալ Ահլտի պէրիը դասիկայ սպանելու
համար այս սենեակ դրիք՝ կը հարցնէ պահապան զին-
ւորներու սենեակին սպասաւոր Զօրուճի Ալիին: Սա ալ
դայո՞՛ կը պատասխանէ: Այն բանտարկեալները, որ այս
խօսակցութիւն ըսած էին, ահռելի տանջանքի մէջ կսպա-
սեն, թէ ինչպէս պիտի սպանեն Գրիգորը:

Երեկոցեան ժամը 12-ին լոյս վառելու համար պահապան Իսմայիլ և Իսա, Եօզղադի բանտարկեալներէն Գամբուր Սալիհ և Զօրումցի Ալի երկաթեայ խցիկը բանալով, յանկարծ կը յարձակին յիշեալ վերաւորին վերայ և կը խողովողեն: Խեղճ վերաւորը դիմ մի սպանէք՝ կաղերսէ. և պահապան Իսմայիլ դարձէն պիտի սատկիս, ասկից ողջ չի պիտի ելլաս» կըսէ: Յետոյ սա լոյսը կը վառէ ու կը մեկնի: 42 բանտարկեալներն այս բաները կը լսեն և կը դիտեն պատուհանէն: Ըստ սովորութեան բանտին բակը ժամը 12-ին լապտեր մը կը վառի. այդ օրը այդ լապտերը չեն վառել, որ աւելի կը սարսափեցնէ բանտարկեալները: Պահապանները երբեմն կուգային և դռան ծակէն Գրիգորի ողբը կը լսէին. նոքա հասկցան, որ նա գեռ ողջ է: Ժամը երկուք ու կէսին Զօրումցի Ալի դռան աջէն գալով՝ կամեցուկ մը Գրիգորին ուղջը մարէ և վառելու պատրուակով ներս մտնեք» կըսէ: Գրիգոր ալ լոյսը կը մարէ: Յիշեալ Ալին անմիջապէս երկու պահապաններու և հաճի Ահմէտի հետ ներս կը մտնայ, մուտին մէջ կը յարձակի Գրիգորի վրայ: Նա դառնալով՝ կաղաղակէ: Բերանը կը գոցեն: Բանտարկեալները այս բանը կը լսեն, կը տեսնան ու կաղաղակեն բարձրաձայն: Ոճրագործները իրենց քստմնելի գործը աւարտելէն վերջ՝ լոյսը կը վառեն ու կը մեկնին: Առաւօտուն ժամը մէկին հաճի Ահմէտ դուռը կը բանայ, դիմ, գործը աւարտելու աղբիւնները դուրս թափելու են՝ կըսէ և կուրախանայ. խեղճի փորը գաշշոնով կը պատուէ, և եթէ մնացած էր կեանքի նշոյլ, այն ալ կը մարէ:

(Կր շարունակվի)

Բաթումից մեզ գրում են, որ Կուկունանի ընկեր
Է.Ֆ.Մ.Ա.Ն.Ն.Ն. վախճանվեց, չկարողանալով տանել
բանտային կեանքը:

Ներկայ ծրագիրը լոյս է տեսնում առանձին գրքոյկով:

Գեղիկի պաշարման և քրդերի հետ տեղի ունեցած
կռուի նկարագրութիւնն ուշ ստանալու պատճառաւ ան-
կարող եղանք հրատարակել ներկայ համարում:

Դաշնակցութեան անծանօթներէից խնդրում է թրք
թակցութեան և նուիրատուութեան համար զիսէլ.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

ՎԻԵՆՆԱ. Դաշնակցութեան ազատ տպարան